ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 նոյեմբերի 2024 թվականի N 4743

«ԳԱՐԱՆՏ 24» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով, հիմք ընդունելով սույն թվականի նոյեմբերի 12-ի N 5 արձանագրությունը և հաշվի առնելով հետևյալը.

Աբովյանի համայնքային ենթակայությամբ գործող մանկապարտեզների 2024 թվականի կարիքների համար սույն թվականի հոկտեմբերի 23-ին հայտարարված ԱԲՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/120 ծածկագրով համակարգչային գույքի և փոշեկուլի ձեռքբերման ընթացակարգի շրջանակում 6-րդ չափաբաժնի /երաժշտական համակարգ/ համար «ԳԱՐԱՆՏ 24» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացվել է նվազագույն գնային առաջարկ՝ 2280000 /երկու միլիոն երկու հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ: Հայտերի գնահատման արդյունքում պարզվել է, որ «ԳԱՐԱՆՏ 24» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում հայտարարությունը /հավելված 1/ հաստատված չէ տնօրենի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ներկայացված չէ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի կայքէջի հղումը /հավելված 1.3/, 6-րդ չափաբաժնի համար ներկայացված չէ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը: Հանձնաժողովը կասեցրել է նիստը և առաջարկել «ԳԱՐԱՆՏ 24» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում (ներառյալ 2024 թվականի նոյեմբերի 8-ը) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Օրենքով սահմանված ժամկետում <<ԳԱՐԱՆՏ 24>> ՍՊԸ-ի կողմից չեն կցվել e-AUCTION համակարգ փաստաթղթերի շտկված տարբերակները:

Արդյունքում գնահատող հանձնաժողովը «ԳԱՐԱՆՏ 24» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատել է անբավարար:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԳԱՐԱՆՏ 24» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացրել

հրավերով նախատեսված փաստաթղթերը, հետևաբար այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

1. Դիմել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ «ԳԱՐԱՆՏ 24» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:
2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Գնումների մասին» օրենքով սահմանված ժամկետում և կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2024թ. նոյեմբերի 25
ք. Աբովյան